

**PROCEEDINGS OF THE YEREVAN STATE UNIVERSITY**

*Chemistry and Biology*

№ 2 (240), 2016

**ՀԱՄԱՌԱՋԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ**

**ԹԻՍԻԱ**

**Ծահման գ. Ա. Դիերիսովֆօքսիդի ազդեցությունը ԱՕՏ-ի միկրոէմուլսիաների  
ռենողիական հատկությունների վրա** էջ 3–7

Ն-հեպտան-նատրիումի բխ(2-էթիլիեքսի) սոլֆոսուկցինատ (ԱՕՏ)-ջուր + դիերիսովֆօքսիդ (ԴԷՍՕ) շրջված միցելային համակարգի տրանսպորտային հատկություններն ուսումնասիրվել են խտաչափության և մածուցիկաշափության մեթոդներով: Համակարգի հարաբերական մածուցիկությունները ( $\eta_r$ ) հաշվարկվել են ԱՕՏ-ի 0.106-ից 1.912 մոլ/կգ կոնցենտրացիայի տիրույթում, ԱՕՏ-ի հաստատուն հիդրատացման աստիճանում ( $W=[\text{քենոային } \phi\text{ազ}]/[\text{ԱՕՏ}]=10$ ) և 298,15-ից 313,15 Կ զերմաստիճանային մարզում: Դիսպերս մասնիկների ծավալային բաժնից հարաբերական մածուցիկության կախվածության կորերի հիման վրա քննարկվել են միցելների միջև հնարավոր փոխազդեցությունները: Ստացված տվյալները համեմատվել են ն-հեպտան-ԱՕՏ-ջուր + ԴՍՍՕ համակարգի համար ստացված տվյալների հետ: ԴՍՍՕ-ի համեմատ ԴԷՍՕ-ի առկայությունը հանգեցնում է միցելային ազդեցատների առաջացմանը մակերևութային ակտիվ նյութի ավելի փոքր կոնցենտրացիաների դեպքում:

**Դոչիկյան Տ. Վ., Սամվելյան Մ. Ա., Գալստյան Ա. Ա., Գրիգորյան Ա. Վ. 1,2,4-  
տրիհազոլների S-ածանցյալների սինթեզը** էջ 8–12

Ուսումնասիրվել է 5-մերկապտո-3,4-երկտեղակալված-1,2,4-տրիհազոլների փոխազդեցությունը քլորքացախաթթվի էթիլէսթերի հետ: Ցույց է տրվել, որ բոլոր ռեակցիաները միանշանակ ընթացել են մերկապտո խմբի հաշվին՝ բերելով S-տեղակալված տարրեր ածանցյալների: Սինթեզված էսթերները ենթարկվել են հիդրազինոլիզի 85%-անոց հիդրազին հիդրատով: Ստացված հիդրազիններից սինթեզվել են համապատասխան թիոսեմիկարբազիդները, որոնց հետագա ներմուկուլային ցիկլացումը հիմքի ջրային լուծույթով բերել է բխ-1,2,4-տրիհազոլների՝ որոնցում օղակները միացված են թիոմեթիլ կամբջակով:

**Գրիգորյան Գ. Ս., Գրիգորյան Զ. Գ., Մալխասյան Ա. Յ. Մանխտոյի և սորբիտոյի ստեարինաթթվի, պամիտինաթթվի և օլեինաթթվի հետ կրեմերի ստացումը**  
էջ 13–16

Ուսումնասիրված է մանխտոյի և սորբիտոյի բարձրագույն ճարպաթթուներով էսթերիկացման ռեակցիայի միջոցով համապատասխան էսթերների ստացում՝ առանց կատալիզատորների և լուծիչների օգտագործման։ Որոշված են նրանց ֆիզիկական և քիմիական հաստատունները։ Մշակվել է ռեակցիայի օպտիմալ ընթացակարգը։

**Բեյերյան Ն. Ս., Մինասյան Փ. Գ. Սի քանի հավելանյութերի ազդեցության ուսումնասիրությունը կումոլի ինքնաօքսիդացման արագության վրա։ II-Չիագեցած ցիանլակտոնի և դիմեթիլսուլֆօքսիդի ազդեցությունը**  
էջ 17–22

Գաղափարական եղանակով քլորբենզոլային լուծույթում ուսումնասիրվել է 2-ցիան-3,4,4-,տրիմեթիլ-2-բութին-4-օլիոլի[չիագեցած ցիան լակտոնի, ՉՑԼ] և ԴՍՍՕ ազդեցությունը Ամբուով հարուցված կումոլի ինքնաօքսիդացման արագության վրա։ Ցույց է տրված, որ ՉՑԼ-ի ներկայությամբ ( $n=0.6$  ռեակցիայի կարգի դեպքում) ռեակցիայի  $R_{st}$  ստացիոնար արագությունը նկարագրվում է փորձարարական կինետիկական հավասարումով։ ԴՍՍՕ-ի դեպքում ( $n=0.5$ ) ստացվում է դասական մեխանիզմով ստացիոնար ռեժիմում ընթացող ռադիկալա-շղթայական ռեակցիաների հավասարումը։ Երկու դեպքում էլ ռեակցիաները սկսվում են τ ինդուկցիոն ժամանակից հետո։ [ՉՑԼ]-ի մեծացման հետ τ-ն փոքրանում է՝ հասնելով 0-ի, եթե  $[ՉՑԼ]_0 \geq 2 \cdot 10^{-3}$   $U$ ։ Ցույց է տրված, որ ԴՍՍՕ-ն փոքրացնում է  $R_{st}$ -ն, ինչն ենթադրաբար կարելի է բացատրել կումոլի հետ, շղթաների զարգացման փուլում առաջացող ազատ ռադիկալների հետ  $ROO^{\cdot}$  ռեակցիայի մեջ մտնելու, մրցակցությամբ։

**Գլորջյան Ս. Ա. Տորֆի սորբումային հատկությունների ուսումնասիրությունը դիմամիկ ռեժիմում ջրային լուծույթներից պղնձի հեռացման համար**  
էջ 23–26

Ուսումնասիրվել են Սևանա լճի ավազանից (ք. Վարդենիս, Գեղարքունիքի մարզ, ՀՀ) վերցրված տորֆ պարունակող սորբենսի վրա պղնձի իննների սորբումային գործնարացները դիմամիկ ռեժիմում։ Սորբենսի սորբումային հատկությունները գնահատվել են ICP-MS եղանակով։ Փորձարարական տվյալների մեկնարանման համար օգտագործվել են։ Լենգմյուրի և Ֆրեյնիխիսի մոդելները։ Ցույց է տրվել, որ Լենգմյուրի մոդելն ավելի ճշգրիտ է նկարագրում փորձարարական սորբցիոն տվյալները և, հետևաբար, այս մոդելն է կիրառվել գնահատելու համար սորբենսի առավելագույն սորբցիոն տարողունակությունը։ Ըստ այս մոդելի, տորֆ պարունակող սորբենսի առավելագույն սորբցիոն տարողունակությունը  $Cu$  (II)-ի համար մոտ 15  $mg/g$  է։

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

**Կարապետյան Մ. Ա., Աղամյան Ն. Յու. Առնետների երկարավուն ուղեղի շնչառական  
կենտրոնի ռետիկուլյար նեյրոնների ակտիվության փոփոխությունը թթվածնա-  
քաղցի դիմամիկայում**

էջ 27–32

Հետազոտությունը նվիրված է շնչառության կարգավորման գործում երկարավուն ուղեղի շնչառական կենտրոնի ռետիկուլյար նեյրոնների (ՌՆ) դերի ուսումնասիրմանը թթվածնաքաղցի պայմաններում: Թթվածնաքաղցի ազդեցության դիմամիկայում ՌՆ-ի իմպուլսային ակտիվության փոփոխությունները կրել են փուլային բնույթ. 4000–5000 մ բարձրության վրա (չափավոր թթվածնաքաղցի փուլ,  $P_{O_2} = 98\text{--}85 \text{ mmHg}$  սն.այ.) ՌՆ-ի իմպուլսային ակտիվությունը բարձրացել է: Սուր թթվածնաքաղցի պայմաններում (7500–8000 մ,  $P_{O_2} = 64\text{--}58 \text{ mmHg}$  սն.այ.) նեյրոնների ակտիվությունը կտրուկ նվազել է: Տարբեր հաճախականության իմպուլսային ակտիվություն ունեցող ՌՆ-ի համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ թթվածնաքաղցի նկատմամբ առավել կայուն են իմպուլսների միջին հաճախություն ունեցող ՌՆ-ի: Թթվածնաքաղցի ազդեցությունից հետո՝ նորմալ մքնուրուտային ճնշման պայմաններում նեյրոնների ակտիվության ելակետային ցուցանիշները աստիճանաբար վերականգնվել են:

**Ամսոնյան Ա. Ա. Դիպեպտիոֆիլաքտիդագ IV-ի բնական սուրստրատները** էջ 33–42

Բազմաֆունկցիոնալ սերինային պրոտեազ, դիպեպտիոֆիլաքտիդագ IV-ը (DPPIV), լայնորեն տարածված է ինչպես կապված (բջջային թաղանթներին), այնպես էլ լուծելի (պլազմայում և օրգանիզմի այլ հեղուկներում) ձևերով: Ֆերմենտը պոկում է երկաբեպտիդ N-ծայրից նախավերջին դիքում պրոլին կամ ալանին պարունակող սպիտակուցային և պեպտիդային մոլեկուլներից: DPPIV-ի բնական սուրստրատներ են հանդիսանում մի շարք կարգավորիչ պեպտիդներ՝ նյարդապեպտիդներ, քեմոլիներ, ինկրետինային հորմոններ և այլն, որոնք կարևոր են իմունամոդուլյացիայի, հոգենյարդային մոդուլյացիայի և այլ ֆիզիոլոգիական գործիքներում: DPPIV-ի ազդեցության տակ այդ պեպտիդները ապաակտիվանում կամ քայրայվում են: Այդ պատճառով DPPIV-ը և հատկապես նրա պրոտեոլիտիկ ակտիվությունը պաթոլոգիաների ժամանակ հաճախ թիրախ են հանդիսանում բուժամիջոցների համար: Այս ակնարկում ներկայացված են տեղեկությունները DPPIV-ի հայտնի և վերջերս բացահայտված որոշ բնական սուրստրատների մասին:

**Դովիկյան Լ. Ա., Սիհամադվարզի Մ., Դուկայան Գ. Վ., Քիշմիրյան Ա. Վ.,  
Զաքարյան Ն. Ա., Կիրակոսյան Գ. Ռ., Այվազյան Ն. Մ. Սարդու արյան կարմիր  
բջիջների վիճակի վրա *Vipera latifi* բույնի ազդեցության մոլեկուլային  
առանձնահատկությունները**

էջ 43–50

Այսուղի մենք ուսումնասիրել ենք *Vipera latifi* բույնի ազդեցությունը մարդու էրիթրոցիտների ստվերների թաղանթների վրա՝ օգտագործելով ֆազկ-

ոնտրաստային մանրադիտակը, ինչպես նաև՝ թույնի ազդեցությամբ ԱԵՖ-ազային ակտիվության փոփոխությունը *in vitro* պայմաններում։ Իոնային պոմպերը՝ ( $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ )- և ( $\text{Ca}^{2+}$ ,  $\text{Mg}^{2+}$ )-ԱԵՖ-ազները առանցքային դեր են խաղում որոշակի կատիոնների ակտիվ տրանսպորտի և ներբջջային էլեկտրոլիտային հոմեոստազի պահպանման գործում։ Ուսումնասիրվել է *Vipera latifrons* թույնի ազդեցությունը մարդու էրիթրոցիտների ստվերների թաղանթներում ազատ ռադիկալային պրոցեսների վրա, ինչպես նաև, սուպերօքսիդ դիմուտագ ֆերմենտի ակտիվության փոփոխությունը ինտոքսիկացիայի դեպքում։

**Հակոբյան Ա. Ն. Կապման էնթալպիայի արժեքի որոշումը լիգանդի հետ ԴՆԹ-ի կոմպլեքսագոյացման դեպքում**

էջ 51–54

ԴՆԹ-ի հետ լիգանդի կապման հետևանքով կապման էնթալպիայի ( $\Delta H$ ) արժեքը որոշվել է Վանտ–Հոփի եղանակով, ունենալով կապման հաստատումի (K) կախումը բացարձակ ջերմաստիճանի հակադարձ մեծությունից։ Հաշվումները, որոնք կատարվել են ԴՆԹ-էրիդիումի բրոմիդ և ԴՆԹ-միտոքանորոն կոմպլեքսների համար, ցույց են տվել, որ եթե  $\Delta H$ -ը որոշվի K-ի 2 տարբեր ջերմաստիճաններում ունեցած արժեքներից, ապա հաշված  $\Delta H$ -ի արժեքը փորձի սխալի սահմաններում հանընկնում է  $\Delta H$ -ի փորձնական արժեքի հետ։

**ՀԱՌՈՐԴՈՒՄՆԵՐ**

**Սիմոնյան Ա. Գ. Ողջի գետի էկոլոգիական վիճակի վերլուծություն ջրի որակի Հայկական ինդեքսի օգնությամբ**

էջ 55–58

Առաջին անգամ Ջրի որակի հայկական ինդեքսի (ՈՀԻ) օգնությամբ գնահատվել է Ողջի, Արծվանիկ և Գեղի գետերի ջրի որակը։ Ցույց է տրվել, որ գետերի ակունքից մինչև գետաբերան նկատվում է ՈՀԻ արժեքի մեծացում, որը վկայում է գետերի ջրի որակի նվազման մասին աղտոտվածության առաջին դասից մինչև երկրորդ դաս։ Հաստատվել է հարաբերակցությունը ջրի ՈՀԻ և որակի այլ ինդեքսների միջև։